ԿԱՐԾԻՔ

ՄԵՐԻ ՀՈՎՍԵՓԻ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՎԱՂ ԱԶԴԱՆՇՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴԵՐԸ ԻՆՏԵԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ (ԵԱՏՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ՝ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը:

Արդի աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումների կարևոր բնութագրիչներ են դարձել պարբերաբար ծագող ճգնաժամերն ու տնտեսական անորոշությունները: Այս համատեքստում էապես կարևորվում են ճգնաժամային ռիսկերի ժամանակին բացահայտումը, դրանց կառավարումն ու կանխարգելմանն ուղղված համապատասխան միջոցառումների իրականացումը: Վերջին երկու տասնամյակների ընթացքում տնտեսագիտական հետազոտությունների մեջ էապես աճել է ճգնաժամերի վերլուծությանը, նրանց դրսևորման առանձնահատկությունների բացահայտմանը, ինչպես նաև ճգնաժամերի վաղ հայտնաբերմանն ու կանխատեսելիության բարձրացմանն ուղղված ուսումնասիրությունների քանակը:

Վերոնշյալ խնդիրներն երբեմն յուրահատուկ դրսևորումներ են ստանում ինտեգրացիոն միավորումներում, քանի որ ձևավորված ընդհանուր շուկաների գոյության պայմաններում անդամ մեկ երկրում ծագած ճգնաժամը անպայմանորեն իր փոխանցումային ազդեցությունն է ունենում մյուս անդամ երկրների տնտեսության վրա՝ կախված ինտեգրացիոն խմբավորման մեջ այդ երկրի ունեցած դերից ու մասնաբաժնից:

Վերջին աշխարհաքաղաքական զարգացումները, մասնավորապես՝ ռուս-ուկրաինական պատերազմը լրջորեն ձևախեղել են մեր տարածաշրջանում մինչ այդ գոյություն ունեցած միջազգային տնտեսական կապերի բնույթը՝ օրվա հրամայական դարձնելով երկրների տնտեսական անվտանգության բարձրացումն ու ճգնաժամային մարտահրավերներին դիմակայելու համապատասխան մեխանիզմների ձևավորումը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ տնտեսական քաղաքականություն իրականացնողներին այսօր առավել, քան երբևէ անհրաժեշտ է ձեռք բերել հիմնավոր գիտելիքներ ճգնաժամերի ձևավորմանը նպաստող գործոնների, դրանք բնութագրող

փոփոխականների շեմային մակարդակների, փոխանցումային ուղիների և հետևանքների, ինչպես նաև դրանց վաղաժամ ազդանշման միջոցառումների վերաբերյալ, որով էլ անառարկելիորեն հիմնավորվում է ընտրված թեմայի արդիականությունը:

Աշխատանքի ներածությունում ներկայացված են ատենախոսության թեմայի արդիականությունն ու կարևորությունը, հստակորեն շարադրված են հետազոտության նպատակը և վերջինիս հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, ինչպես նաև բնութագրված են մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումները, վերլուծություններն ու գնահատականները:

Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և նորույթը.

- Մշակվել է ԵԱՏՄ անդամ երկրների 1994-2022 թթ. ճգնաժամերի մատրից, որն արտացոլում է միության յուրաքանչյուր երկրում արժութային, բանկային, ֆինանսական, պարտքային և «կտրուկ կանգի» ճգնաժամերի ի հայտ գալու ժամանակագրությունը, դրանց միաժամանակյա դրսևորման և սինխրոնիզացման դեպքերը:
- Պանելային վեկտոր-ավտորեգրեսիոն (VAR-vector autoregresion) մոդելի միջոցով բացահայտվել է ԵԱՏՄ երկրների տնտեսության վրա ազդող արտաքին տնտեսական շոկերի փոխանցումային մեխանիզմը և գնահատվել դրանց ազդեցությունը Միության տնտեսության հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա:
- ԵԱՏՄ ինտեգրացիոն միավորման համար մշակվել է տնտեսական ճգնաժամերի վաղ ազդանշման *միագործոն (ազդանշանային մոտեցում)* և *բազմագործոն (լոգիթ մոդել)* համակարգեր և գնահատվել է դրանց կիրառման հնարավորությունները ինտեգրացիոն գործընթացում:
- Տնտեսամաթեմատիկական վերլուծության արդյունքում բացահայտվել է ճգնաժամերի բարձր կանխատեսելիություն ապահովող նշանակալի փոփոխականների համախումբը, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների համար ճգնաժամի առաջացման առավել նշանակալի գործոնները (համաշխարհային տնտեսական աճ և նավթի գներ) և գնահատվել է դրանց ազդեցության չափը:
- Ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի մոդելների կիրառման միջոցով գնահատվել է տնտեսական ճգնաժամերը ազդանշող նշանակալի

փոփոխականների համար շեմային մակարդակներ, որի հիման վրա հաշվարկվել է նաև ճգնաժամի նախազգուշացման շեմային մեծությունները:

- Մշակվել է տնտեսական կայունության գնահատման և մշտադիտարկման լրացուցիչ ցուցանիշների համախումբ, որը կարող է կիրառելի լինել ինչպես ինտեգրացիոն միավորման, այնպես էլ անդամ երկրների տնտեսական քաղաքականությունների իրացման գործընթացում:

Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը.

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից՝ տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգի զարգացման և գործնական կիրառության գործընթացներում, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսների նախարարությունների և կենտրոնական բանկերի, ինչպես նաև տնտեսական քաղաքականություն իրականացնող այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինտեգրացիոն տարբեր միավորումներում տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգերի մշակման առումով, ինչպես նաև այս ոլորտում հետազոտություններ իրականացնող մասնագետների համար:

Հետազոտության ծավալը և կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Տեքստը կազմում է 146 էջ՝ առանց հավելվածի:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ատենախոսության առաջին՝ ***«Տնտեսական ճգնաժամերը և դրանց վաղաժամ ազդանշման տեսամեթոդական հիմքերը»*** գլխում հեղինակը ներկայացրել է տնտեսական ճգնաժամերի էությունը, նրանց վաղաժամ ազդանշման համակարգերը, վերջիններիս մշակման էվոլուցիան և «սերունդները», մեթոդական հիմքերն ու այդ ոլորտի միջազգային փորձը, ինչպես նաև ԵԱՏՄ երկրների տնտեսական անկայունությունների ժամանակագրությունը:

Ատենախոսության երկրորդ՝ **«Տնտեսական ցնցումների փոխանցումային մեխանիզմն ու ԵԱՏՄ ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգը»** գլխում ներկայացվել է ԵԱՏՄ անդամ երկրների մակրոտնտեսական ընդհանուր իրավիճակը, տնտեսական ցնցումներն ու շոկերը և դրանց փոխանցումային մեխանիզմներն այդ

երկրների միջև, ինչպես նաև հանգամանալից ներկայացվել է անդամ երկրների ճգնաժամերի վաղաժամ ազդանշման բազմագործոն համակարգը:

Ատենախոսության երրորդ՝ **«ԵԱՏՄ վաղաժամ ազդանշման համակարգի արդյունքներն ու դերը ինտեգրացիոն գործընթացում»** գլխում կատարված ուսումնասիրությունը հիմնականում վերաբերում է վաղ ազդանշման միագործոն համակարգի գործարկման առանձնահատկություններին, ազդանշանային մոտեցումներին և փոփոխականների շեմային մակարդակներին ԵԱՏՄ երկրների շրջանակներում:

Եզրակացություններում և առաջարկություններում հիմնականում ամփոփվել են և հակիրճ ձևակերպվել հետազոտության արդյունքում ստացված հիմնական եզրահանգումներն ու առավել առարկայական առաջարկները:

Ատենախոսության վերաբերյալ կան *դիտողություններ և առաջարկություններ*, որոնք գրախոսվող աշխատանքի թեմայով ուսումնասիրությունների շարունակման դեպքում, մեր կարծիքով, պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը: Դրանցից հատկապես անհրաժեշտ է նշել հետևյալները:

- Ատենախոսության 1-ին գլխում մշակվել և ներկայացվել է ԵԱՏՄ անդամ երկրների 1994-2022թթ. ճգնաժամերի մատրից համապատասխան ժամանակագրությամբ: Անհերքելի փաստ է, որ իսկապես կատարվել է աշխատանք և վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծության հիման վրա կատարվել են նաև որոշակի եզրակացություններ, սակայն, մեր կարծիքով, նպատակահարմար չէ վերոնշյալը ներկայացնել որպես գիտական նորույթ արտացոլող դրույթ:
- Ատենախոսության 2-րդ գլխում, որտեղ ներկայացվել են տնտեսական շոկերն ու դրանց փոխանցումային մեխանիզմներն ԵԱՏՄ անդամ երկրներում, առավելապես ուշադրություն է դարձվել նրան, թե ինչպես են համաշխարհային տնտեսության մեջ դրսևորվող շոկերն ու անկայունություններն ազդում ԵԱՏՄ երկրների տնտեսությունների վրա, սակայն հետազոտությունը առավել ամբողջական կլիներ, եթե համակողմանի ուսումնասիրվեր նաև անդամ երկրների միջև ճգնաժամերի և շոկերի ազդեցության փոխանցումային մեխանիզմները:
- Մեր կարծիքով, գոյություն ունեցող մոդելների կիրառումից զատ, որոնք հնարավորություն են տալիս գնահատականներ տալ միայն մոդելներում առկա փոփոխականների և տվյալների շրջանակներում, անհրաժեշտ էր

ատենախոսության մեջ կատարել ԵԱՏՄ անդամ երկրների տնտեսությունների որոշակի ոլորտային կամ ճյուղային ուսումնասիրություններ, ինչը թույլ կտար ավելի խորը բացահայտել անդամ երկրների տնտեսությունների խոցելի կողմերը, հետևաբար հնարավորություն կտար հեղինակին ճգնաժամերի կանխատեսման և այդ ընթացքում առաջացող տարատեսակ տնտեսական ռիսկերն ու անորոշություններն առավել կառավարելի դարձնելու տեսանկյունից կատարել ավելի արդյունավետ եզրահանգումներ:

- Ատենախոսության շրջանակներում կատարված աշխատանքն ու հետազոտության ստացված արդյունքներն անհամամեմատ ավելին են, քան դրանց հիման վրա կատարված առաջարկությունները, որոնք արտացոլվել են Եզրակացություններ և առաջարկություններ բաժնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողություններն էապես չեն ազդում հետազոտության արժանիքների վրա: Մ. Հովսեփյանի ատենախոսությունն ունի ընդգծված գիտագործնական նշանակություն, իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որտեղ կիրառվել է տնտեսական լավ մշակված գործիքակազմ տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգի գործարկման և արդյունքների ամփոփման ու ներկայացման համար:

Հեղինակը ցուցաբերել է մասնագիտական ու վերլուծական բավարար մակարդակ, ինչի մասին փաստում են ատենախոսությունում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են օգտագործվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից տնտեսական ճգնաժամերի վաղաժամ ազդանշման համակարգի զարգացման և գործնական կիրառության գործընթացներում, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ երկրների ֆինանսների նախարարությունների, կենտրոնական բանկերի և տնտեսական քաղաքականություն մշակող և իրականացնող այլ մարմինների կողմից:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Ընդհանուր առմամբ, Մերի Հովսեփյանի «Տնտեսական ճգնաժամերի վաղ

ազդանշման հնարավորությունները և դերը ինտեգրացիոն գործընթացներում (ԵԱՏՄ երկրների օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ՝
<<ՍԱՐԵՐԻ ՋՈՒՐ>> ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ,
ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ, ԴՈՑԵՆՏ Է. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՊԱՐՈՆ Է. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
<<ՍԱՐԵՐԻ ՋՈՒՐ>> ՍՊԸ-Ի ԿԱԴՐԵՐԻ
ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

16.08.2023թ.